ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. **Գործառույթներ**.

Հարկադիր կատարողը՝

1) իրականացնում է հարկադիր կատարման ենթակա ակտերի հարկադիր կատարման ապահովման գործընթացը,

2) իրականացնում է պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու գործառույթը,

3) իրականացնում է պարտապանի աշխատավարձի, կենսաթոշակի, կրթաթոշակի և այլ տեսակի եկամուտների վրա բռնագանձում տարածելու գործառույթը,

4) իրականացնում է պարտապանի և (կամ) նրա գույքի հետախուզում,

5) իրականացնում է պարտապանին պատկանող բնակարանների, շենքերի և շինությունների բացման, պարտապանին պատկանող, սակայն այլ անձանց զբաղեցրած բնակարանների, շենքերի և շինությունների բացման, զննության, ինչպես նաև պարտապանին պատկանող, սակայն այլ անձանց մոտ գտնվող պարտապանի գույքի առգրավման հետ կապված կատարողական գործողությունները,

6) իր գործառույթներն իրականացնում է «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի 18-րդ, 19-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների և պարտականությունների շրջանակներում, ինչպես նաև իրականացնում է Ծառայության կանոնադրական խնդիրներից և նպատակներից բխող այլ գործառույթներ:

2. **Պաշտոնին ներկայացվող պահանջներ**.

Հարկադիր կատարման ծառայությունում հարկադիր կատարողի պաշտոնն զբաղեցվում է առանց աշխատանքային ստաժի և փորձի:

Պաշտոնին ներկայացվող մասնագիտական պահանջները սահմանված են ՀՀ փոխվարչապետի 30 հուլիսի 2020 թվականի N 461-Ն որոշմամբ: